*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 28-ի N 3/3.8-1/7230-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 29-ի N ԱԱ/3-4/1821-10 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՎՀՀ՝ 02566915) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-153-Ա որոշմամբ (2009 թվականի հոկտեմբերի 9-ի N Մ-704-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2010 թվականի օգոստոսի 19-ին կնքված՝ N 056 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ապակյա կառուցվածքների, մետաղական բազրիքների և շերտավարագույրների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 17087600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**8 հոկտեմբերի 2010 թվականի N Մ-686-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N Մ 153-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N 3/3.8-1/6956-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 17-ի N ԱԱ/3-4/1733-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՎՀՀ՝ 02566915) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի մարտի 2-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-153-Ա որոշմամբ (2009 թվականի հոկտեմբերի 9-ի N Մ-704-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2010 թվականի հուլիսի 1-ին կնքված՝ N 030 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կախովի առաստաղների պատրաստման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 5014250 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**8 նոյեմբերի 2010 թվականի N Մ-685Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N 1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 18-ի N 3/3.8-2/7019-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N 3-6/45631-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից ձեռք բերված ստորև նշված ջեռուցման, օդափոխության և սառնամատակարարման կենտրոնական համակարգերի տարբեր սարքավորումները և նյութերը ներմուծվում են Իտալիայից Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) մետաղապլաստե խողովակներ (73 տեղ, 1480.9 կգ ընդհանուր քաշով, 18373.85 եվրո արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմում են 1531.50 եվրո, ՄԾՓ ՏՄ).

2) մետաղապլաստե խողովակ (4 տեղ, 73.4 կգ ընդհանուր քաշով, 676.60 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 73.40 եվրո, ՄԾՓ ՏՄ).

3) կաթսա՝ գազի հատակի, առանց բոցամուղ (4 տեղ, 4226 կգ ընդհանուր քաշով, 31220.02 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 4285.10 եվրո, ՄԾՓ ՏՄ).

4) պոմպ՝ ջրի (5 տեղ, 1729.95 կգ ընդհանուր քաշով, 21960.39 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 1920 եվրո, ՄԾՓ ՏՄ).

5) ռետինե մեկուսիչ թերթեր (103 տեղ, 864.73 կգ ընդհանուր քաշով, 7022.71 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 958.50 եվրո, ՄԾՓ ՏՄ).

6) օդափոխման համակարգի մետաղական մասեր (2 տեղ, 385 կգ ընդհանուր քաշով, 3394.35 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 274.45 եվրո, ՄԾՓ ՏՄ).

7) ջրատաքացուցիչ՝ գազային (1 տեղ, 285 կգ ընդհանուր քաշով, 1920 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 289 եվրո, ՄԾՓ ՏՄ).

8) հակավիբրացիոն կցորդիչ՝ սև մետաղից, կցաշուրթերով (4 տեղ, 1763 կգ ընդհանուր քաշով, 11333.83 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 1954 եվրո, ՄԾՓ ՏՄ).

9) խողովակաշարի կցամասեր՝ սև մետաղից (2 տեղ, 1403 կգ ընդհանուր քաշով, 3487.19 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 1555 եվրո, ՄԾՓ ՏՄ).

10) մեմբրանային բաք՝ սև մետաղից (4 տեղ, 397.1 կգ ընդհանուր քաշով, 2409.23 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 772.70 եվրո, ՄԾՓ ՏՄ):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 նոյեմբերի 2010 թվականի N Մ - 684Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՉԻՆԻ ՇՐՋԱՆԻ ԲԵՐՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 23-ի N 3/3.8-1/7088-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 3249-10 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N ԱԱ/3-4/1777-10 եզրակացությունները* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 20200000 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Լաչինի շրջանի Բերձոր քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման նախագծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԳՇՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00005417) 2010 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված N ՀՀ/ՆՆ-10/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների իրականացում՝ 19200000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան
«17» սեպտեմբերի 2010թ.

# «ԼՂՀ Լաչինի շրջանի Բերձոր քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման նախագծում»
# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Վերակառուցել ԼՂՀ Լաչինի շրջանի Բերձոր քաղաքի խմելու ջրի ջրամատակարարման համակարգը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ԼՂՀ Լաչինի շրջանի Բերձոր քաղաք, ջրամատակարարման բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 20.200.000,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | Բերձոր քաղաքի բնակիչները |

2

| | | |
|---|---|---|
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2010թ սեպտեմբերի 01 –ից մինչեւ 2010թ. դեկտեմբերի 31-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԳՇՆ» ՍՊԸ-ի կողմից ԼՂՀ Լաչինի շրջանի Բերձոր քաղաքի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի վերակառուցման նախագծում՝ 19.200.000,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>Նախատեսվում է նաև վերակառուցման նախագծի փորձաքննություն՝ 1.000.000,00 դրամ մոտավոր արժեքով: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**8 հոկտեմբերի 2010 թվականի N Մ - 683 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N Մ-361-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Բժիշկներ առանց սահմանների» ֆրանսիական միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի օգոստոսի 11-ի N 3/3.8-1/5842-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի օգոստոսի 11-ի N ԱՍ/3-4/1267-10 եզրակացությունները,* **որոշում է.**

1. Սահմանել, որ «Բժիշկներ առանց սահմանների» ֆրանսիական միության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 01538594) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի «Բժիշկներ առանց սահմանների» ֆրանսիական միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Էդ-Սպո» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01834916) 2010 թվականի հուլիսի 22-ին կնքված N 186 հաշիվ-ապրանքագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 4 սառնարանների ձեռքբերում՝ 650000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**8 նոյեմբերի 2010 թվականի N Մ - 682 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՆԿԱԲԱՐՁԱ - ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի նոյեմբերի 5-ի N 3/3.8-1/7465-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի նոյեմբերի 7-ի N 3482, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի նոյեմբերի 7-ի N ՀԴ/7315-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի նոյեմբերի 7-ի N ԱԱ/3-4/1933-10 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 65925400 դրամ ընդհանուր արժողությամբ «Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի բժշկական կենտրոնի մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունքի հիմնանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝02507456) կնքված ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ատիկաշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01237598) 2010 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված՝ N ՀՀ/ՉՀ-1/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնանորոգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 64525400 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«01» հոկտեմբերի 2010թ.

«Կոտայքի մարզի Չարենցավանի ԲԿ-ի մանկաբարձա-գինեկոլոգիական
բաժանմունքի հիմնանորոգում»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հիմնովին վերանորոգել Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունքը |
| 2. | Ծրագրի բարեգործական ոլորտի նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Կոտայքի մարզ, ք.Չարենցավան, առողջապահության բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 65.925.400,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնը |



| | | |
|---|---|---|
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2010թ սեպտեմբերի 01-ից մինչև 2011թ. սեպտեմբերի 01-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Ատիկա Շին» ՍՊԸ -ի կողմից Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունքի հիմնանորոգման աշխատանքներ՝ 64.525.400,00 առանց ԱԱՀ-ի:<br><br>Նախատեսվում է նաև շինարարական աշխատանքների հեղինակային հսկողություն՝ 400.000,00 ՀՀ դրամ մոտավոր արժեքով:<br><br>Նախատեսվում է նաև շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն՝ 1.000.000,00 ՀՀ դրամ մոտավոր արժեքով: |
| 10. | Ծրագրի իրականացման հաստատված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Առողջապահության նախարարության հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային և ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական

Արմինե Դարբինյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**8 նոյեմբերի 2010 թվականի N Մ - 681 - Ա**
**քաղ. Երևան**

# «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 23-ի N 3/3.8-1/7090-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N 3248 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N ԱԱ/3-4/1779-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 17600000 դրամ ընդհանուր արժողությամբ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտակերտ քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման նախագծում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԳԻԴԵՊԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02518022) 2010 թվականի սեպտեմբերի 1-ին կնքված N ԼՂՆՆ-09/10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների իրականացում՝ 16600000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հյաստանի Հանրապնտության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան
«17» սեպտեմբերի 2010.թ.

**«ԼՂՀ Մարտակերտ քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման նախագծում»**
**ԾՐԱԳԻՐ**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Վերակառուցել ԼՂՀ Մարտակերտ քաղաքի խմելու ջրի ջրամատակարարման համակարգը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ԼՂՀ Մարտակերտ քաղաք, ջրամատակարարման բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 17.600.000,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | Մարտակերտ քաղաքի բնակիչները |



| | | |
|---|---|---|
| 7. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2010թ սեպտեմբերի 01 –ից մինչեւ 2010թ. փետրվարի 01-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ԳԻԴԵՊԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ի կողմից ԼՂՀ Մարտակերտ քաղաքի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի վերակառուցման նախագծում՝ 16.600.000 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>Նախատեսվում է նաև վերակառուցման նախագծի փորձաքննություն՝ 1.000.000,00 դրամ մոտավոր արժեքով: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ԼՂՀ կառավարության հետ |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝
Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# ՈՐՈՇՈՒՄ

**8 հոկտեմբերի 2010 թվականի N Մ - 680 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 28-ի N 3/3.8-2/7242-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 6-ի N ՀԴ/7280-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի հոկտեմբերի 4-ի N ԱԱ/3-6 /1869-10 և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2010 թվականի սեպտեմբերի 29-ի N 01/14.2/2684-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի միացյալ հայկական հիմնադրամի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ստացված 5 բեռնարկղ բժշկական սարքավորումների և պարագաների (337 տեղ, 33745.78 կգ ընդհանուր քաշով, 282174.40 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 36200 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բժշկական սարքավորումները և պարագաները անհատույց հանձնվելու են Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի բժշկական կենտրոնին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**8 նոյեմբերի 2010 թվականի N Մ-679-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 28-ի N 3/3.8-2/7229-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 4-ի N ԱԱ/3-6/1870-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից ձեռք բերված ստորև նշված բեռները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) Իրանի Իսլամական Հանրապետությունից «Կոմերցիալ Շոջայի ԻՄՊ-ԷՔՍՊ» կազմակերպության միջոցով՝ շինարարական ապրանքներ (19190 կգ ընդհանուր քաշով, 14435 եվրո արժողությամբ՝ ներառյալ 1400 եվրո փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ).

2) Իրանի Իսլամական Հանրապետությունից «Կոմերցիալ Շոջայի ԻՄՊ-ԷՔՍՊ» կազմակերպության միջոցով՝ շինարարական ապրանքներ (22910 կգ ընդհանուր քաշով, 13987.2 եվրո արժողությամբ՝ ներառյալ 1500 եվրո փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ).

3) Թուրքիայից «Կավկազ-Տուր» ընկերության միջոցով՝շինարարական ապրանքներ (3120 կգ ընդհանուր քաշով, 13587 եվրո արժողությամբ՝ ներառյալ 1960 եվրո փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ։

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե։

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**8 նոյեմբերի 2010 թվականի N Մ- 678 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-262-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի սեպտեմբերի 30-ի N 3/3.8-1/7308-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 5-ի N ԱԱ/3-4/1880-10 եզրակացությունները* **ո ր ո շ ու մ** *է.*

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին (4-րդ փուլ)» N Մ-262-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մաստեր-Կլիմա» ՍՊԸ-ի հետ (քաղ. Երևան, Հյուսիսային պողոտա 10/3, ՀՎՀՀ՝ 00077507) 2010 թվականի օգոստոսի 23-ին կնքված՝ N 02/Մ-Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պայմանագրում նշված ապրանքների ձեռքբերում՝ 7274140 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի :

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**8 նոյեմբերի 2010 թվականի N Մ - 677 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի N Մ-606-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Հայաստան» համահայկական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի 2010 թվականի հոկտեմբերի 4-ի N 5/27-552 գրությունը* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 17-ի N Մ-606-Ա որոշման վերնագրում «2010 թվականի մարտի 19-ի N Մ-178-Ա» բառերը փոխարինել «2010 թվականի հունիսի 18-ի N Մ-395-Ա» բառերով.

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**8 նոյեմբերի 2010 թվականի N Մ - 676 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 17-Ի N Մ-643-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Հայաստան» համահայկական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 5/27-552 գրությունը* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 17-ի N Մ-643-Ա որոշման ընդունման ամսաթվում «17 օգոստոսի» բառերը փոխարինել «17 սեպտեմբերի» բառերով.

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**8 նոյեմբերի 2010 թվականի N Մ 675 Ա**

**քաղ. Երևան**

**«ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 155 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 23-ի N 3/3.8-1/7101-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N3253-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N ԱԱ/3-4/1775-10 ու Երևանի քաղաքապետի 2010 թվականի նոյեմբերի 1-ի N 01/12-6203 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Արոնցի 15, բն.20, ՀՎՀՀ՝ 01003187) իրականացվող 6375000 դրամ արժողությամբ «Երևանի թիվ 155 մանկապարտեզի սանհանգույցների հիմնանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Սամօջախ» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գյուղ Մեծ Մասրիկ, ՀՎՀՀ՝ 08414357) 2010 թվականի սեպտեմբերի 15-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սանտեխնիկայի և երեսապատման սալիկների մատակարարում՝ 2000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Շեն-կոնցեռն» ՓԲԸ-ի հետ (քաղ. Երևան, Շիրակի 2/2, ՀՎՀՀ՝ 02201344) 2010 թվականի սեպտեմբերի 14-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է [illegible] շինանյութերի մատակարարում՝ 2000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարան:

ՆԱԽԱԳԱՀ Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է
«Կամրջակ»ՍԲՀԿ
տնօրենի կողմից
29 սեպտեմբեր 2010 թ.

**«Երևանի Թիվ 155 մանկապարտեզի Սանհանգույցների հիմնանորոգման ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Քանաքեռ-Զեյթուն համայնքի թիվ 155 մանկապարտեզի սանհանգույցների հիմնանորոգումամ |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | ՎԻԼԴԵ ԳԱՆԶԵՆ (WILDE GANZEN) Heuvellaan 36-1217JN Hilversum -NEDERLAND |
| 4. | Ծրագիրն կատարողը | «Կամրջակ »ՍԲՀԿ-ն իրավաբ հասցե Ք.Երևան Արոնցի 15 բն.20.Աշխ.Կորյունի 3 ՀՎՀՀ 01003187, ՀՀ 21700-003-064151-001, «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ բանկ,Հայաստան , ՓԲԸ Հեռ 516-044, ֆաքս 56-13-03 |
| 5. | Ծրագիրն ստացողը | Երևան. Քանաքեռ Զեյթուն համանյք թիվ 155 մանկապարտեզ , հասցեն՝ Վահե Վահյան 1 ՀՎՀՀ 00825795, Հեռ 010-287880, Բանգավառ սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | ծրագրի ընհանուր բյուջեն կազմում է 7500000( Յոթ միլիոն հինգ հարյուր հազար դրամ դրամ), որից 15% 1125000 դրամը համաֆինանսավորվում է քաղաքապետարանի կողմից |
| 7. | Բարեգործություն ստացողը | Քանաքեռ Զեյթուն համայնքը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 20.10.2010-ից մինչև 20.12.2010 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Կամրջակե ՍԲՀԿ-ի կողմից հիմնովի վերանորոգելու է Երևանի թիվ 155 մանկապարտեզի երեխաների համար օգտագործվող չորս սանհանգույցները: Աշխատանքները կատարվելու են վարձու աշխատողների միջոցով կնքելով աշխատանքային պայմանագրեր |
| 10. | Ձեռք բերվեող(ներմուծվող) ապրանքներերի նու ծառայությունների համառոտ նկարագիրը,ծավալները և նախատեսվող գինը | Ձեռք են բերվում շինանյութեր «Սամօջախ» ՍՊԸ-ից և Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ից ընդհանուր 4000000 դրամի չափով առանց ավելացված հարկի |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը,պետական | Ծրագրի իրականացվում է «Կամրջակ»ՍԲՀԿ-ի կողմից, համագործակցելով Քանաքեռ |

| | | |
|---|---|---|
| | կառավարման ,տեղական ինքնակառավարման մարմինների,այլ կազմակերպությունների հետ | Ջեյթուն համայնքի ղեկավարության և մանկապարտեզի տնօրինության հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է «Կամրջակ»ՄԲՀԿ-ի և Քանաքեռ Զեյթուն համայնքի ղեկավարության կողմից և աշխատանքները կատարելուց հետո՝ սահմանված կարգով կներկայացվի հաշվետվություն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով |

«Կամրջակ»ՄԲՀԿ
տնօրեն Բ. Աղամալյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**8 նոյեմբերի 2010 թվականի N Մ-674-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍ-ՏՈՍԻ 20-Ի N Մ-533-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐ-ԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱ-ԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 23-ի N 3/3.8-1/7087-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N ԱԱ/3-4/1776-10 եզրակացությունները,* ***ո ր ո - շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 20-ի «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Վայոց Ձորի մարզի Վայք քաղաքի թիվ 1 մանկապարտեզի հիմնանորոգում» ծրագրի մասին» N Մ-533-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականաց-ման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սամօջախ» ՍՊԸ-ի հետ (Գեղարքունիքի մարզ, գյուղ Մեծ Մասրիկ, ՀՎՀՀ՝ 08414357) 2010 թվականի սեպտեմբերի 15-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սանտեխնիկայի և երեսպատման սալիկների մատակարարում՝ 2500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 նոյեմբերի 2010 թվականի N Մ - 673 - Ա**
**քաղ. Երևան**

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՋՈԿԱՏՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՇՏԱԲ – ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՄԲԱՐՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի օգոստոսի 27-ի N 3/3.8-1/26004-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 2-ի N 2962-10, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 14/13164-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 8-ի N ՀԴ/6513-10, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2010 թվականի օգոստոսի 30-ի N 05/31/2941-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 15-ի N ԱԱ/3-4/1707-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի ուսանողական ջոկատների հանրապետական շտաբ–կամավորական աշխատանքների ծառայություն» հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01505795) իրականացվող՝ 60000000 դրամ արժողությամբ «Աշխատանքի միջազգային ճամբարների կազմակերպում Հայաստանում» ծրագիրը (կցվում է):

2. «Հայաստանի ուսանողական ջոկատների հանրապետական շտաբ – կամավորական աշխատանքների ծառայություն» հասարակական կազմակերպությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար կապալառու կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն տվյալ եռամսյակի ընթացքում ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՎԱՐՉԱՊԵՏ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի ուսանողական ջոկատների հանրապետական շտաբ-կամավորական աշխատանքների ծառայություն հասարակական կազմակերպության Վարչության կողմից

«20» օգոստոսի 2010թ.

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Աշխատանքի միջազգային ճամբարների կազմակերպում Հայաստանում |
| 2. | Ծրագրի բարեգործական ոլորտի նպատակը | Կազմակերպել հայ և արտասահմանցի կամավորների գործունեությունը Հայաստանում բացվող աշխատանքի միջազգային ճամբարներում, որտեղ կամավորները հասարակական հիմունքներով անվարձահատույց կատարում են սոցիալական, երեխաների էսթեթիկական դաստիարակության, շինարարական, էկոլոգիական, վերականգնողական, հիվանդ երեխաների, մանկատան սաների ազատ ժամանցի կազմակերպման աշխատանքներ: Հոգ տանել ծնողազուրկ, հաշմանդամ երեխաների մասին, շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ իրականացնել: Երիտասարդներին հնարավորություն ընձեռել անվճար, հանրօգուտ աշխատանքներ կատարելու: |
| 3. | Բարեգործը | Հայաստանի Ուսանողական Ջոկատների Հանրապետական Շտաբ - Կամավորական Աշխատանքների Ծառայություն – HUJ – Հասարակական Կազմակերպություն |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայաստանի Ուսանողական Ջոկատների Հանրապետական Շտաբ - |

| | | |
|---|---|---|
| | | Կամավորական Աշխատանքների Ծառայություն – HUJ – Հասարակական Կազմակերպություն<br>Կորյուն 19Ա, Երևան, ՀՀ ԿՈԴ 15-01505795 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն - Երևանի Մանկական Վերականգնողական կենտրոնում, Աբովյանի և Իջևանի SOS Մանկական գյուղերում, Զատիկ մանկատանը, Երևանի Բուսաբանական այգում, Գեղարդավանքի և Զվարթնոցի պատմամշակութային համալիրների և այլ հիմնարկություններում և տարածքներում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ընդամենը 60 մլն.<br>2011 թ. - 12 մլն դրամ,<br>2012 թ. - 12 մլն դրամ,<br>2013 թ. - 12 մլն դրամ,<br>2014 թ. - 12 մլն դրամ,<br>2015 թ. - 12 մնլ դրամ:<br>Ստացման ժամկետները մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 15-ը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | 500-550 ծնողազուրկ և հաշմանդամ երեխաները: Մանկատների և Վերականգնողական կենտրոնի տարածքներում կատարվելիք աշխատանքները նպաստում են բուժ մասնաշենքերի և հիվանդասենյակների միջավայրի վերանորոգմանը, վերականգնմանը:<br>Բուսաբանական այգու ծրագրի շրջանակներում կատարվելիք աշխատանքների թիրախ խումբ են հանդիսանում Բուսաբանական այգու աշխատակազմը և Երևան քաղաքի բնակչությունը, քանի որ Բուսաբանական այգին ապահովում է քաղաքի օդի մաքրությունը: |

| | | |
|---|---|---|
| | | |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2010 թ. դեկտեմբերի 31-ից – 2015 թ. դեկտեմբերի 31-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Նշված վայրերում ամռանը՝ հունիս, հուլիս, օգոստոս ամիսների ընթացքում միջազգային ճամբարների գործունեություն: Հայ կամավորները միջազգային կամավորների հետ միասին մանկատներում և վերականգնողական կենտրոնում կկատարեն հետևյալ աշխատանքները. երեխաների համար օտար լեզուների, նկարչության, պարի, երգի, թատերական խմբակների բացում, ճամբարի վերջում երեխաների աշխատանքների ցուցահանդեսի կազմակերպում, հայ և արտասահմանից ժամանած կամավորների և մանկատան երեխաների հետ համատեղ մեծ թատերական բեմադրության պատրաստում, մանկատան, վերականգնողական կենտրոնի, տարածքների բարեկարգման աշխատանքներ, ներկարարական աշխատանքներ: Բուսաբանական այգու տարածքի բարեկարգման, չոր և ծեր ծառերի կտրատման, նոր արահետների բացման, բույսերի խնամքի աշխատանքներ:<br><br>Ֆինանսական միջոցների ծավալը հինգ տարիների համար կկազմի մոտ 60 մլն դրամ. յուրաքանչյուր տարի Զատիկ մանկատանը, Աբովյանի և Իջևանի SOS Մանկական գյուղերում բացվող ճամբարների գործունեությունը կազմակերպելու համար 2.6մլն դրամ, Վերականգնողական կենտրոնի համար 2մլն դրամ, Բուսաբանական այգու համար 1մլն դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Յուրաքանչյուր տարի ձեռք բերվող ապրանքատեսակներ և ծառայություններ՝ սննդամթերք շուրջ 3մլն, էքսկուրսիաներ շուրջ 1մլն, խաղեր և խաղալիքներ շուրջ 500հազ., գրենական պիտույքներ շուրջ 150հազ., |

| | | |
|---|---|---|
| | | աշխատանքային գործիքներ շուրջ 100հազ., տնտեսական ապրանքներ շուրջ 300հազ., միկրոավտոբուսի վարձակալում ճամբարների համար շուրջ 350հազ., ISIC միջազգային ուսանողական քարտերի, ցուցանակների, պաստառների, շապիկների, կամավորական այլ սիմվոլիկայի ստացում շուրջ 500 հազ., երկարաժամկետ կամավորների համար օթևանի ապահովման վճարներ շուրջ 3.5մլն: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ընդամենը 12 մլն՝ <br><br> *Կոմունալ ծախսեր՝* 2011թ.-800հազ. դրամ, 2012թ.- 700հազ. դրամ, 2013թ. – 600հազ. դրամ, 2014թ. –600հազ. դրամ, 2015թ. – 600հազ. դրամ, <br><br> *Հաշվետվությունների հրապարակմանը ուղղված ծախսեր՝* 2011թ.-50հազ. դրամ, 2012թ.- 50հազ. դրամ, 2013թ. – 50հազ. դրամ, 2014թ. –50հազ. դրամ, 2015թ. – 50հազ. դրամ, <br><br> *Գրասենյակային ծախսեր՝* 2011թ.-500հազ. դրամ, 2012թ.- 800հազ. դրամ, 2013թ. – 500հազ. դրամ, 2014թ. –550հազ. դրամ, 2015թ. – 600հազ. դրամ <br><br> *Մարդատար ավտոտրանսպորտի ձեռքբերման կամ ներմուծման ծախս՝* 2015թ - շուրջ 5.5մլն դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Արտաքին գործերի, առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի, մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունների հետ: |

| | | |
|---|---|---|
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ճամբարների մշտական այցելություն, ծրագրի մասնակիցների հետ զրույցների, միջոցառումներին մասնակցություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**8 նոյեմբերի 2010 թվականի N Մ - 672 Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N Մ-358-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Ուսանողական ջոկատների շտաբ – կամավորական աշխատանքների ծառայություն» հասարակական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 3/3.8-2/6742-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի15-ի N ԱԱ/3-6/1715-10 եզրակացությունները,* **ո ր ո - շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2007 թվականի հունիսի 15-ի «Ուսանողական ջոկատների հանրապետական շտաբ – կամավորական աշխատանքների ծառայություն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Աշխատանքի միջազգային ճամբարների կազմակերպում Հայաստանում» ծրագրի մասին» N Մ-358-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետը լրացնել «ISIC միջազգային ուսանողական քարտերի ներմուծում» բառերով:

2. Սահմանել, որ միջազգային ուսանողական քարտերը (ISIC, 1 տեղ, 3.7 կգ քաշով, 401 հատ, 50 եվրո արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմում են 96 եվրո, ՄՓԵւՍԱՓԱՄ ՄՏ) ներմուծվել են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
8 նոյեմբերի 2010 թվականի N Մ 671-Ա
քաղ. Երևան

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑԻ ԿՈՇԻԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ, ԿԱՐԻ ԵՎ ՓԱՅՏԱՄՇԱԿՄԱՆ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 28-ի N 3/3.8-1/7234-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն 2010 թվականի հոկտեմբերի 5-ի N 3434-10, Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 30-ի N ՖԻ/ՄարտՄխ-2/4130-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 30-ի N ԱԱ/3-4/1838-10 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող 14997.25 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ «Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի կոշիկի վերանորոգման, կարի և փայտամշակման արհեստանոցների վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված (քաղ. Երևան, Մովսես Խորենացու 22, ՀՎՀՀ՝ 02517115) ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Վանակս» ԲԲԸ-ի հետ (քաղ. Վանաձոր, ՀՎՀՀ՝ 06901369) 2010 թվականի սեպտեմբերի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 14997.25 ԱՄՆ ի դոլարին համարժեք դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների վերաբերյալ, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկություններ:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բ. Սարգսյանի ________ կողմից
«17» սեպտեմբերի 2010թ

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի կոշիկի վերանորոգման, կարի և փայտամշակման արհեստանոցների վերանորոգման աշխատանքների իրականացում

## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է նպաստել Գավառի թիվ 1 հատուկ դպրոցում ուսանող թվով 95 աշակերտների հոգեբանական վերականգնմանն ու մասնագիտական կողմնորոշմանը՝ դպրոցի արհեստանոցների /կոշիկի վերանորոգման, կարի և ծեռագործի /երկու/ և փայտամշակման/ վերանորոգման և վերազինման միջոցով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում («Բարեգործության մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 15-րդ հոդված): |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի Հայ Օգնության Ֆոնդ և Բաց հասարակությունների ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղ |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՄՆ-ի ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան, Մ. Խորենացու փող. 22, ՀՎՀՀ 02517115: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ք. Գավառ , Միքայելյան 33:<br>Բնագավառը՝ կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 14,997.25 ԱՄՆ դոլար: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Գավառի թիվ 1 հատուկ դպրոց ՊՈԱԿ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 17.09.2010 – 31.12.2010 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերանորոգել Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի չորս արհեստանոցները, որոնք հնարավորություն կտան աշակերտներին ուսումնական պրոցեսին զուգընթաց տիրապետելու մի քանի արհեստների, ինչպես նաև ինքնուրույն իրականացնելու դպրոցին անհրաժեշտ գույքի պատրաստման և վերանորոգման աշխատանքները:<br><br>Ծրագրի բյուջեն 14,997.25 ԱՄՆ դոլար է և բաղկացած է միայն շինարարական աշխատանքների արժեքից: Իրականացվելիք շինարարական աշխատանքների մանրամասն ծավալները և արժեքները տրված են պայմանագրին կից հավելվածում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում 14,997.25 (տասնչորս հազար ինը հարյուր իննսունյոթ) ԱՄՆ դոլար 25 ցենտին համարժեք ՀՀ դրամի չափով՝ պայմանագիր կնքված 17.09.2010թ «Կանակա» ՍՊԸ -ի (ՀՀ, ք. Վանաձոր, Նժդեհի 4, ՀՎՀՀ 06901369) և Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի, (ՀՀ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115) միջև: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան, ՀՀ Կառավարությանն առընթեր բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողով |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակի, Բաց հասարակությունների ինստիտուտի օժանդակության հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի կողմից եռամսյա և տարեկան հաշվետվությունների միջոցով: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 նոյեմբերի 2010 թվականի N Մ-67Ա
քաղ. Երևան

## «ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՆԿԱՏԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԼՎԱՑՔԱՏԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 29-ի N 3/3.8-1/7265-10, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2010 թվականի նոյեմբերի 9-ի N 3435-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 30-ի N ԱԱ/3-4/1837-10 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ** *է.*

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՀ, քաղ. Արմենի 15, բն.20, ՀՎՀՀ՝ 01003187) իրականացվող 3100000 դրամ արժողությամբ «Վանաձորի մանկատան տարածքում լվացքատան կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Դանիել» ՍՊԸ-ի հետ (ՀՀ, Լոռու մարզ, քաղ. Սպիտակ, Մուրացան 5 ՀՎՀՀ՝ 06800345) 2010 թվականի սեպտեմբերի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լվացքատան կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 3067600 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է
«Կամրջակ»ՍԲՀԿ
տնօրենի կողմից
«19»Սեպտեմբեր 2010 թ.

## Լվացքատան կառուցման [illegible]

### Ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Վանաձորի մանկատուն »ՊՈԱԿ-ի [illegible] տարածքում լվացքատան կառուցում : |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | ՎԻԼԴԵ ԳԱՆԶԵՆ (WILDE GANZEN) Heuvellaan 36-1217JN Hilversum -NEDERLAND |
| 4. | Ծրագիրն կատարողը | «Կամրջակ »ՍԲՀԿ-ն իրավաբ հասցե Ք.Երևան Արմենի 15 բն.20.Աշխ.Կորյունի 3 -14/1 ՀՎՀՀ 01003187 ՀՀ 21700-003-064151-001 «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ բանկ Հայաստան »ՓԲԸ Հեռ 516-044-Ֆաքս 56-13-03 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լոռվա մարզ քաղաք Վանաձոր «Վանաձորի մանկատուն »ՊՈԱԿ ,բնագավառը սոցիալական : |
| 6. | Ծրագրի բյուջեն | ծրագրի ընհանուր բյուջեն կազմում է 3100000 երեք միլիոն մեկհարյուր հազար դրամ : Ծրագրի շրջանակում կառուցվելու է լվացքատան համար շինություն ,որը օգտագործվելու է որպես լվացքատուն : |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի ստացողը Վանաձոր Տարոն 2-րդ թաղամասում գտնվող «Վանաձորի մանկատուն »ՊՈԱԿ-ն ՀՎՀՀ 06917461- Տնօրեն Արշիկ Հարությունյան -093431520-0322-60120: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 17.09.2010-ից մինչև 20.12.2010-ի վերջ: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները,անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Կամրջակ» ՍԲՀԿ-ն որպես պատվիրատու կնքել է պայմանագիր «Դանիել»ՍՊԸ –ի հետ կապիտալ շինարարության համար և լվացքատան համար առանձին շինությունը կառուցվելու և ամբողջությամբ շահագործման է հանձնվելու համապատասխան պայմանագրի: |

| | | |
|---|---|---|
| 10. | Չեռք բերվող(ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը,ծավալները և նախատեսվող գինը | Ներմուծում չի նախատեսվում: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը,պետական կառավարման ,տեղական ինքնակառավարման մարմինների,այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացվում է «Կամրջակ»ՍԲՀԿ-ի կողմից համագործակցելով մանկատան տնօրինության հետ : |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է «Կամրջակ»ՍԲՀԿ-ի և Մանկատան տնօրինության կողմից և աշխատանքները կատարելուց հետո կներկայացվի հաշվետվություն: |

«Կամրջակ»ՍԲՀԿ-ի տնօրեն` Բենիամին Աղամալյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 հոկտեմբերի 2010 թվականի N Մ - 669-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 22-ի N 3/3.8-2/7072-10, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 23-ի N ԳԱ/05/3833-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N 3-6/45666-10 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Գերմանիայի Դաշնության «Բնության և սոցիալական սկզբունքի վրա հենված սնում և կուլտուրական լանդշաֆտ ոչ առևտրային ասոցիացիա» հիմնադրամի կողմից Հայաստանի պետական ագրարային համալսարանի հասցեով ուղարկված կաթի մշակման սարքավորումների (75 տեղ, 8794.65 կգ ընդհանուր քաշով, 110069 եվրո ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, ՄՃՓ ՏՄ) ներմուծման ծրագիրը: Սարքավորումները նախատեսված են Հայաստանի պետական ագրարային համալսարանի ուսումնափորձնական տնտեսության նյութատեխնիկական բազայի բարելավման համար:

2. Հայաստանի պետական ագրարային համալսարանի՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**8 նոյեմբերի 2010 թվականի N Մ- 668 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N Մ-442-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N 3/3.8-1/6957 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 17-ի N 3-4/1736-10 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ** *է.*

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 20-ի «Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեկեցիկ պայմաններ» ծրագրի մասին» N Մ-442-Ա (2010 թվականի ապրիլի 30-ի N Մ-262-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բրիտանիա» ՓԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 02536427) հետ 2010 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված N 001/010 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինանյութի մատակարարում՝ 4000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի։

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե։

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**8 նոյեմբերի 2010 թվականի N Մ 667-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-903-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 1-ի N 3/3.8-1/7392-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 7-ի N ԱԱ/3-4/1937-10 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից 2010 թվականի ընթացքում իրականացվող «Կրթավճար» ծրագրի մասին» N Մ-903-Ա (2010 թվականի մարտի 19-ի N Մ-161-Ա որոշման խմբագրությամբ) որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ կետերում «86200000 ՀՀ դրամ» բառերը փոխարինել «89983182 դրամ» բառերով.

2) ծրագրի 10-րդ կետի վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Ակնկալում ենք «Մեգնա» ՍՊԸ-ից ձեռք բերել Ռենո Լոգան 1.4 Լ մակնիշի ավտոմեքենա 3783182 դրամ արժողությամբ՝ առանց ԱԱՀ-ի»:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից [illegible]՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման [illegible] համար ունի զգալի նշանակություն.

«Մեգնա» ՍՊԸ-ի հետ (քաղ. Երևան, Տիգրանյան 1, ՀՎՀՀ՝ 00083019) 2010 թվականի սեպտեմբերի 17-ին կնքված N 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Ռենո Լոգան 1.4Լ մակնիշի ավտոմեքենայի ձեռքբերում՝ 3783182 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**8 նոյեմբերի 2010 թվականի N Մ 666-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-898-Ա ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի hwktembe8i 1-ի N 3/3.8-1/7356-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի նոյեմբերի 7-ի N ԱԱ/3-4/1937-10 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի դեկտեմբերի 25-ի «Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից 2010 թվականի ընթացքում իրականացվող «Բարեգործական ճաշարաններ» ծրագրի մասին» N Մ-898-Ա (2010 թվականի մարտի 19-ի N Մ-169-Ա որոշման խմբագրությամբ) որոշման և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ կետերում «76346000 ՀՀ դրամ» բառերը փոխարինել «80129182 դրամ» բառերով.

2) ծրագրի 10-րդ կետի վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Ակնկալում ենք «Մեգնա» ՍՊԸ-ից ձեռք բերել Ռենո Լոգան 1.4 Լ մակնիշի ավտոմեքենա 3783182 դրամ արժողությամբ առանց ԱԱՀ-ի»:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված ստորև

նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Մեգնա» ՍՊԸ-ի հետ (քաղ. Երևան, Տիգրանյան 1, ՀՎՀՀ՝ 00083019) 2010 թվականի սեպտեմբերի 17-ին կնքված N 1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Ռենո Լոգան 1.4Լ մակնիշի ավտոմեքենայի ձեռքբերում՝ 3783182 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության պետական եկամուտների կոմիտե:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ
17 սեպտեմբերի 2010 թվականի N Մ-665-Ա
քաղ. Երևան

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՌՈՌԳՄԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 15-ի N 3/3.8-1/6893-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 11-ի N ԱԱ/3-4/1658-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 3752930 դրամ ընդհանուր արժողությամբ «Ոռոգման ցանցի կառուցման» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից (ՀՎՀՀ 04703401) կնքված՝ ստորև նշված եռակողմ պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

1) «Լանդշաֆտ Դիզայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ 00251608) 2010 թվականի օգոստոսի 22-ին կնքված N 15Շ/ 010 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանական շենքի հարավային ճակատի երկարությամբ ոռոգման ցանցի կառուցման աշխատանքների իրականացում՝ 3752930 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԴԻՎԱՆԱՊԵՏ
Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
«03» 2010 թ.

Ոռոգման ցանցի կառուցման
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է նոր միաբանական շենքի հարավային կողմում կառուցել ոռոգման ցանց, այդ տարածքի կանաչապատման համար |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածք |
| 6. | Ծրագրի բյուջեն | 3 752 930 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Մայր Աթոռի միաբանները, աշխատակիցները և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 20 սեպտեմբերի 2010թ. – 31 մայիսի 2011թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է ոռոգման ցանցի կառուցում՝ 3 752 930 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Ոռոգման ցանցի կառուցման աշխատանքներն իրականացվում են «Լանդշաֆտ Դիզայն» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ ք. Երևան, Չարենցի 9, բն. 17, ՀՎՀՀ 00251608)՝ պայմանագիր՝ թիվ 15Շ/010՝ կնքված 22.08.2010թ.: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է 1536մ երկարությամբ խողովակաշարերի անցկացում և ոռոգման համակարգի կառուցում՝ 3 752 930 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Էջմիածին քաղաքի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնաժողովին կներկայացվեն ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին տեղեկություններ, ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

Գլխավոր ճարտարապետ՝
Արտավազդ Նազարեթյան

Ֆինանսական բաժնի տնօրեն
Մարինե Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 հոկտեմբերի 2010 թվականի N Մ -664Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-Ի N Մ-317-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Հայկական Կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 23-ի N 3/3.8-2/7109-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 23-ի N ԱԱ /3-6/1771-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից ձեռք բերված փրկարարական ծառայության պարագաները (13 տեղ, 183 կգ ընդհանուր քաշով, 557845.48 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 20000 ռուսական ռուբլի, բեռի ցանկը կցվում է, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 4-ի «Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ տեղական համայնքներ Հարավային Կովկասում» ծրագրի մասին» N Մ-317-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումները ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Приложение № 1
к Правилам ведения журналов учета полученных и выставленных счетов-фактур
книг покупок и книг продаж при расчетах по налогу на добавленную стоимость
утвержденным постановлением Правительства Российской Федерации от 2 декабря 2000 г. № 914
(в редакции постановления Правительства Российской Федерации от 15 марта 2001 г. № 189,
от 27 июля 2002 г. № 575, от 16 февраля 2004 г. № 84 от 11 мая 2006 г. № 283, от 26 мая 2009 г. № 451)

## СЧЕТ-ФАКТУРА № 1391 от 07 августа 2010

Продавец Общество с ограниченной ответственностью"СпецСтройМонтаж", ООО"СпецСтройМонтаж"
Адрес 121069, Москва, Переулок Трубниковский 24, стр. 1
ИНН / КПП продавца 7704706148 / 770401001
Грузоотправитель и его адрес Общество с Ограниченной Ответственностью "СпецСтройМонтаж"; 121069, Москва, Переулок Трубниковский 24, стр. 1
Грузополучатель и его адрес Армянское Общество Красного Креста; г.Ереван, Ул. Пароняна д. 21 тел. (37410) 58 36 30
К платежно-расчетному документу № от
Покупатель ООО"Кетикян ев Гортцнкернер"
Адрес г.Ереван, ул. Абовяна д.31 тел. (37499) 97 33 37
ИНН / КПП покупателя 01526862 /

Валюта: руб.

| Наименование товара (описание выполненных работ, оказанных услуг), имущественного права | Единица измерения | Количество | Цена (тариф) за единицу измерения | Стоимость товаров (работ, услуг), имущественных прав, всего без налога | В том числе акциз | Налоговая ставка, % | Сумма налога | Стоимость товаров (работ, услуг), имущественных прав, всего с учетом налога | Страна происхождения | Номер таможенной декларации |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| Веревка Статика 10 мм | м | 1800 | 48,30 | 86 940,00 | - | 18 | 15 649,20 | 102 589,20 | - | |
| Восьмерка Huit D02. Petzl | шт | 36 | 847,45 | 30 508,20 | - | 18 | 5 491,48 | 35 999,68 | - | |
| Восьмерка 928.01 стандарт, Camp | шт | 9 | 805,08 | 7 245,72 | - | 18 | 1 304,23 | 8 549,95 | - | |
| Каска Elios A42. Petzl | шт | 70 | 2 711,86 | 189 830,20 | - | 18 | 34 169,44 | 223 999,64 | - | |
| Зажим левый Ascension B17. Petzl | шт | 18 | 2 711,86 | 48 813,48 | - | 18 | 8 786,43 | 57 599,91 | - | |
| Зажим правый Ascension B17. Petzl | шт | 18 | 2 711,86 | 48 813,48 | - | 18 | 8 786,43 | 57 599,91 | - | |
| Карабин Alto Carico Acciaio Camp | шт | 108 | 711,86 | 76 880,88 | - | 18 | 13 838,56 | 90 719,44 | - | |
| Каска ТОХО. Salewa | шт | 29 | 2 372,88 | 68 813,52 | - | 18 | 12 386,43 | 81 199,95 | - | |
| Всего к оплате: | | | | 557 845,48 | | | 100 412,20 | 658 257,68 | | |

Руководитель организации (подпись) (ф.и.о.) / Кабин Н. В. /
Главный бухгалтер (подпись) (ф.и.о.) / Савина Т. Г. /
Индивидуальный предприниматель (подпись) (ф.и.о.)
(реквизиты свидетельства о государственной регистрации индивидуального предпринимателя)

14/5.6

Примечание: Первый экземпляр (оригинал) - покупатель Второй экземпляр (копия) - продавец

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 հոկտեմբերի 2010 թվականի N Մ-663-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-90-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N ՀԳ/06/6822-10 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 23-ի N 3/3.8-1/7091-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 23-ի N ԱԱ/3-4/1772-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին N Մ-90-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայաստանի Հանրապետության նախագծերի պետական արտագերատեսչական փորձաքննություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01508665) 2010 թվականի սեպտեմբերի 7-ին կնքված՝ ծառայությունների վճարովի մատուցման N ARM-809-G03-T-02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տուբերկուլյոզի կաբինետների վերանորոգման՝ աշխա-

տանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի փորձաքննության իրականացում՝ 81400 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 նոյեմբերի 2010 թվականի N Մ- -Ա 662-Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-642-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 14-ի N ՀԳ/06/6667-10 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N 3/3.8-1/6929-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 17-ի N 3-4/1732-10 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ** *է.*

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի ու մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի մասին N Մ-642-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ի (ՀՎՀՀ՝ 00063418) և «Մեդիմեքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝01222077) 2010 թվականի օգոստոսի 27-ին կնքված «Պետության կարիքների համար բժշկական սարքավորման պահպանման ծառայությունների ձեռքբերման գնման» N ԾՁԲ-10/57 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է առողջապահության բնագավառի մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպատեխնիկական աջակցու-

թյան ծառայությունների մատուցում՝ 6180000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

8 հոկտեմբերի 2010 թվականի N Մ - Ա 661-Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ- 228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

---

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 16-ի N ՀԳ/06/6793-10 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 23-ի N 3/3.8-1/7100-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N ԱԱ/3-4/1780-10 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ի (ՀՎՀՀ՝ 00063418) և «Հազարաշեն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01816381) 2010 թվականի հունիսի 28-ին կնքված՝«Պետական կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման» N ԳՀԱՇՁԲ 10/06 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնանորոգման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների իրականացում՝ 3425000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 հոկտեմբերի 2010 թվականի N Մ-660-Ա
քաղ. Երևան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-282-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագիր)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 18-ի N ՀԳ/06/6895-10 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 27-ի N 3.8-1/7158-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 24-ի N ԱԱ/3-4/1786-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ու ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին N Մ-282-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սմարթլայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝01548908) 2010 թվականի սեպտեմբերի 10-ին կնքված՝ «Գրասենյակային թղթի ձեռքբերման գնման» N ՊԱՊՁԲ-10/8-1-ԱՆԳՀ-02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրասենյակային թղթի ձեռքբերում՝ 15600 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 նոյեմբերի 2010 թվականի N Մ-659-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 30-Ի N Մ-282-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագիր) (1)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 18-ի N ՀԳ/06/6897-10 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 28-ի N 3/3.8-1/7235-10 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 24 -ի N ԱԱ/3-4/1787-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ու ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի ապրիլի 30-ի «Առողջապահական համակարգի հզորացում» դրամաշնորհային ծրագրի մասին N Մ-282-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սմարթլայն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01548908) 2010 թվականի սեպտեմբերի 10-ին կնքված՝ «Գրասենյակային նյութերի և գրենական պիտույքների ձեռքբերման» N ՊԱՊՁԲ-10/7-1-ԱՆԳՀ-02 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրասենյակային նյութերի և գրենական պիտույքների ձեռքբերում՝ 175000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 նոյեմբերի 2010 թվականի N Մ - 658 Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N Մ-512-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Հայ կաթողիկե եկեղեցու Հայաստանի համայնք)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 29-ի N 3/3.8-1/7273-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 30-ի N ԱԱ /3-4/1840-10 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայ կաթողիկե եկեղեցու Հայաստանի համայնք» կրոնական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի հայ կաթողիկե եկեղեցի» կրոնական կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-512-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ախուրյանի Կոռպշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ 05801184) կնքված՝ N1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Գյումրի քաղաքի Հաղթանակի 45 հասցեում «Կաթողիկե եկեղեցու» կառուցման աշխատանքների իրականացում՝ 615 116 647 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից ընդունված 2009 թվականի սեպտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 29-ի N Մ-512-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» («Հայաստանի հայ կաթողիկե եկեղեցի» կրոնական կազմակերպություն) N Մ-633-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ | Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 հոկտեմբերի 2010 թվականի N Մ - 657Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի N Մ-512-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 1)

**(Հայ կաթողիկե եկեղեցու Հայաստանի համայնք)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 28-ի N 3/3.8-1/7241-10, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի սեպտեմբերի 30-ի N ԱԱ/3-4/1839-10 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2010 թվականի հոկտեմբերի 8-ի N 01/4106 -10 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի հայ կաթողիկե եկեղեցի» կրոնական կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-512-Ա որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

որոշմանը կից ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում «շինարարական և մոնտաժային աշխատանքներ» բառերը փոխարինել «շինարարական, մոնտաժային և շինարարության հեղինակային ու տեխնիկական հսկողության աշխատանքներ» բառերով:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայ կաթողիկե եկեղեցու Հայաստանի համայնք» կրոնական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նոնզամ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ 05532879) 2010 հոկտեմբերի 1-ին կնքված՝ N2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Գյումրի քաղաքի Հաղթանակի 45 հասցեում «Կաթողիկե եկեղեցու» շինարարության նկատմամբ հեղինակային և տեխնիկական հսկողության աշխատանքների իրականացում՝ 2 500 000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 հոկտեմբերի 2010 թվականի N Մ - 656 Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 30-ի N 3/3.8-2/7306-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 4-ի N ԱԱ/3-6/1868-10 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից Միացյալ հայկական հիմնադրամի միջոցներով՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված փայտյա նստարանների և ալյումինե աստիճանների՝ (44 տեղ, 3832 կգ ընդհանուր քաշով, 58540 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռների համապատասխան ձևակերպման և բաշխման աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
8 հոկտեմբերի 2010 թվականի N Մ-655Ա
քաղ. Երևան

«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2010 թվականի սեպտեմբերի 30-ի N 3/3.8-2/7301-10, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2010 թվականի հոկտեմբերի 7-ի N ԶԴ/7289-10 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2010 թվականի հոկտեմբերի 4-ի N ԱԱ/3-6/1871-10 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի Մարսել քաղաքից՝ անհատ բարերար Ֆերդինանտ Գրայանի կողմից աջակցության նպատակով «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ուղարկված բեռի (28 տեղ, 8713 կգ ընդհանուր քաշով, 9950 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 3237 եվրո, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

[illegible] Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ա·14/Հ.7

Ց Ո Ւ Ց Ա Կ

| Հ/հ | Ապրանքի անվանումը | Չափ. միավ. | Քանակը | Գինը /EUR/ | Քաշը /կգ/ |
|---|---|---|---|---|---|
| 1. | հիվանդի մահճակալ | հ | 36 | 7200 | 4350 |
| 2. | ցենտրիֆուգա | հ | 1 | 500 | 60 |
| 3. | արհեստական վինտիլյատոր | հ | 1 | 200 | 10 |
| 4. | հիվանդի քայլակ | հ | 7 | - | 6 |
| 5. | հենակ | հ | 8 | - | - |
| 6. | ներքնակ | հ | 11 | - | 165 |
| 7. | վիրաբուժական շորերի արկղ | հ | 186 | 600 | 3790 |
| 8. | կտորվածքների շինա | հ | 3 | 100 | 27 |
| 9. | ծեռնոց | հ | 1 | - | 7 |
| 10. | դիֆիբրիլյատոր | հ | 2 | 200 | 14 |
| 11. | ճնշման սարք | հ | 1 | 50 | 15 |
| 12. | միջերակային սրսկման պարագաներ | հ | 3 | - | 16 |
| 13. | էլեկտրոկարդիոգրաֆ | հ-ծու | 1 | 100 | 17 |
| 14. | ֆիբրոսկոպ | հ | 1 | 200 | 8 |
| 15. | գործիքների հավաքածու | հ | 1 | - | 9 |
| 16. | 32 հ ծածկոց | հ | 1 | - | 12 |
| 17. | 28 հ բժշկական շոր | հ | 1 | 100 | 22 |
| 18. | բժշկական պարագա | հ | 1 | 60 | 7 |
| 19. | բժշկական պարագա | հ | 1 | 60 | 8 |
| 20. | ծածկոց | հ | 1 | 50 | 14 |
| 21. | միզապարկի կատետրի հավաքածու | հ | 1 | 30 | 17 |
| 22. | մանկական վիրակապական հավաքածու | հ | 1 | - | 11 |
| 23. | սիստեմա | հ | 1 | - | 9 |
| 24. | բժշկական պարագա | հ | 1 | 70 | 6 |
| 25. | բժշկական պարագա | հ | 1 | 60 | 11 |
| 26. | ռենտգեն կատետր | հ | 1 | 80 | 6 |
| 27. | բժշկական շորեր | հ | 1 | 90 | 20 |
| 28. | 6 հ բժշկական աթոռ | հ | 6 | 120 | 74 |
| 29. | հիվանդի աթոռ | հ | 1 | 80 | 2 |
| | Ընդամենը՝ | | | 9950 | 8713 |

Տնօրեն՝ Ա.Յ.ԹԱՄԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 նոյեմբերի 2010 թվականի N Մ -654Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի N Մ-640-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի 2010 թվականի հոկտեմբերի 4-ի N ՀՕ-037/010 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 17-ի N Մ-640-Ա որոշմանը կից ցանկը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

56 տեղ , 1281 կգ ընդհանուր քաշով և 54721 ԱՄՆ դոլար արժեքով, որից 7421 ԱՄՆ դոլար կազմում է ճանապարհածախս բաշխման ցանկը

| N | Ապրանքի Անվանումը | Քանակ հատ | Տեղ | Բրուտտո կգ. | Նետտո կգ. | Արժեք ԱՄՆ դոլար | Ծանոթությունը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Պամպերս | --- | 8 | 227.0 | 220.0 | 6000.0 | Այս ապրանքատեսակները ԼՂՀ-ի Ավետարանչական Ընկերակցության և ԼՂՀ-ի Սոցիալական ապահովության նախարարության միջոցով բաշխվելու է անապահով ընտանիքներին և համապատասխան բժշկական հաստատություններին: |
| 2. | Վերմակ | 208 | 26 | 584.0 | 520.0 | 9200.0 | |
| 3. | Բաճկոն | 110 | 9 | 204.0 | 193.0 | 12000.0 | |
| 4. | Ջեռուցապահարան /օգտ./ | 1 | 1 | 27.0 | 27.0 | 1200.0 | |
| 5. | Հաշմանդամի սայլակ /էլեկ. մարտկոցով/ օգտ. | 1 | 1 | 23.0 | 23.0 | 2500.0 | |
| 6. | Հենակ հաշմանդամի /օգտ./ | 7 | 1 | 7.0 | 7.0 | 280.0 | |
| 7. | Գրքեր /մանկական, նկարազարդ, անգլերեն/ | 48 | 1 | 18.0 | 17.8 | 200.0 | |
| 8. | Օգտագործած հագուստ | --- | 3 | 75.0 | 73.5 | 2250.0 | |
